քննութեան միջոցին արտաքին գործոց նախարարը պնդել է, որ ճանաչումը ներկայումս միտք չունի, քանի որոշած չեն նրա սահմանները. սահմանների որոշումից յետոյ Ամերիկան կասի իր խօսքը: Դէպի ծով ելք ունենալու խնդրի վերաբերմամբ Ամերիկայի տեսակէտն այն է, որ Տրապիզոնը պէտք է լինի Հայաստանի նաւահանգիստը:

Իտալական կառավարութիւնը, որի կողմից սիրալիր ընդունելութիւն է գտել մեր ներկայացուցիչ Մ. Վարանդեանը, Հայաստանի ստեղծմանը վերաբերւում է ամենայն համակրութեամբ. նա շահագրգռուած է Հայաստանի հետ տնտեսական և առևտրական կապեր հաստատելու, միաժամանակ խօսք է տուել Սան Ռէմօում պաշտպանել մեր դատը:

Ամենից քիչ տեղեկութիւններ ունենք Ֆրանսայի մասին, որի վերաբերմունքը դէպի հայկական դատը, առհասարակ, սառն է, երևի այն պատճառաբանութեամբ, թէ տնտեսապէս ինքը ևս քայքայուած է և, բացի այդ, հայկական պահանջները ներհակում են իր շահերին. նաւահանգստի վերաբերմամբ այն տեսակէտն ունեն, որ Բաթումից պէտք է օգտուենք: Կարծում ենք, որ մայիսի ընթացքում շատ հետաքրքիր նորութիւններ պէտք է լսենք մեր հարցի մասին. պատերազմութիւնը դեռ ևս կը մնայ, մինչև վերջնական վճիռ ստանալը:

Մենք և մեր հարևանները. — Ինչ վերաբերում է Վրաստանի և Ադրբէջանի հետ ունեցած մեր ներքին յարաբերութիւններին, պատիւ ունեմ յայտնելու, որ իրագործել ենք մեր տեսակէտը և հասել որոշ հետևանքների:

Ղարաբաղի և Զանգեզուրի դէպքերը յայտնի են ձեզ. հայ անպաշտպան գիւղացին, յուսենալով ռազմամթերք և կանոնաւոր զօրք, դուրս է եկել օրհասական կուի իր վրա յարձակողների դէմ և, բնականօրէն, չի կարողացել դիմադրել մինչև վերջը. դրա հետևանքը եղել է այն, որ թաթարների կողմից այրուել են լքած գիւղերը, Ելլախ–Շուշի ճանապարհի երկու կողմն ընկած հայկական գիւղերը մաքրուել են, Շուշու հայկական մասը աւերուել է հիմնովին. քաղաքում տեղի է ունեցել նաև ջարդ, որի ընթացքում հայերը տուել են 400–500 զոհ: Վերջին երեք շաբաթուայ ընթացքում Զանգեզուրի տերիտորիայի վրա ադրբէջանեան զօրքեր և բանդաներ չեն երևացել, այնուամենայնիւ, ժողովուրդը դեռ զինուորական պայմանների մէջ է ապրում:

Ապրիլ 10–ին Թիֆլիսի մեր պատերազմութեան հեռագրի համաձայն անդրկովկասեան խորհրդաժողովը որոշել է դադարեցնել կռիւները ու յանձնաժողովներ ուղարկել դէպքերը տեղում քննելու: Ղազախի յանձնաժողովն իր գործը վերջացրել է մի օրում և ապրիլ 14–ին վերադարձել Թիֆլիս: Ապրիլ 19–ին մի յանձնաժողով է ճանապարհուել Շուշի. 23–ին ստացուած հեռագիրն ասում է, որ իրենք Ելլախ–Շուշի ճանապարհի վրա ոչ մի հայ չեն տեսել: Շուշում պատահել են մի քանի հոգու, որոնք պատսպարուած են եղել այս ու այն թաթարի մօտ: Երրորդ յանձնաժողովը, որ պիտի գնայ Շարուր–Նախիջևան, հասել է Երևան. նա դեռ դուրս չի եկել ճանապարհների փակ լինելու պատճառով. յանձնաժողովի թաթար անդամ Սուլթանովը գնացել է Դաւալու, ծանօթանալու ճանապարհի վիճակին, բայց դեռ չի վերադարձել:

Խորհրդաժողովը դեռ պաշտօնապէս գոյութիւն ունի, բայց նիստերն ընդհատուած են երեք օրով Բագուում տեղի ունեցած յեղաշրջման հետևանքով: Ապրիլ 27–ի գիշերուայ ժամը 12–ին բոլշևիկները հասել են Բալաջարի և վերջնագիր են ներկայացրել Ադրբէջանի կառավարութեան, իշխանութիւնը յանձնելու ռազմա–յեղափոխական կոմիտէին. խորհրդարանը 28–ին ընդունել է պահանջը և կատարել: